# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Նոյեմբերի 3-ին, կիրակի.- Ը կիրակի զկնի Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Զի ոչ ինչ է ի ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի, եւ գաղտնի՝ որ ոչ ծանիցի» (Ղուկ. ԺԲ 2) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 56):

Ս. Պատարագից հետո Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց Հայրապետական մաղթանք:

***Նոյեմբերի 9-ին, շաբաթ.- Սրբոց Հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի եւ ամենայն երկնային զօրացն:***

Այսօր Մայր Տաճարում, Հրեշտակապետաց Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գաբրիել աբղ. Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Տէր Աստուած մեր, որ կարգեցեր յերկինս զդասս եւ զինուորութիւնս հրեշտակաց եւ հրեշտակապետաց ի սպասաւորութիւն փառաց քոց» բնաբանով քարոզ խոսեց:

***Նոյեմբերի 10-ին, կիրակի.- Թ կիրակի զկնի Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշեն աբղ. Սանոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Մի երկնչիր, բայց միայն հաւատա» (Մարկ. Ե 36) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 63):

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

***Նոյեմբերի 17-ին, կիրակի.- Ժ կիրակի զկնի Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Առաքել եպս. Քարամյանը: Քահանայական ձեռնադրությունից հետո պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

***Նոյեմբերի 21-ին, հինգշաբթի.- Ընծայումն Ս. Աստուածածնի երից ամաց ի Տաճարն:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Իգնատիոս աբղ. Մալխասյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Բարեխօսեա, խնդրեա, աղաչեա, զի ըստ անճառելի մաքրութեանդ՝ եւ ահա զբանիդ հաւատամ զընդունելութիւն» (Ս. Գրիգոր Նարեկացի) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 66):

*Նոյեմբերի 24-ին, կիրակի.- Ա. կիրակի Յիսնակաց:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

*Նոյեմբերի 30-ին, շաբաթ. - Տօն Սրբոց Առաքելոցն եւ առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի եւ Բարդուղիմէոսի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Թադեոս վրդ. Զիրեկյանցը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Եւ իբրեւ երթայցէք, քարոզեցէք եւ ասացէք, թէ մերձեալ է արքայութիւն երկնից» (Մատթ. Ժ 7) բնաբանով քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*Դեկտեմբերի 1-ին, կիրակի.- Բ կիրակի Յիսնակաց:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Փառք Քեզ, Տէր, փառք Քեզ, յաղագս ամենայնի Քեզ փառք, Տէր» (Ժամագիրք) բնաբանով քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

**Դեկտեմբերի 7-ին** Ս. Էջմիածնի Մայր Տաճարում հանդիսապետությամբ Տ. Փառեն եպս. Ավետիքյանի տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն՝ ի ոգեկոչումն 1988 թ. երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակի:

Հոգեհանգստյան արարողությանը մասնակցում էին Մայր Աթոռի միաբան հայրերը, պաշտոնեությունը, հավատացյալներ:

*Դեկտեմբերի 8-ին, կիրակի.- Գ կիրակի Յիսնակաց:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշեն աբղ. Սանոսյանը: «Հայր մեր»-ից առաջ Ներսես արքեպս. Պոզապալյանն ընթերցեց Ս. Գրիգոր Նարեկացու «Մատեան Ողբերգութեան» աղոթամատյանի 1000-ամյակի առիթով Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը:

Ս. Պատարագից հետո Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն՝ «վասն բիւրաւոր զոհից ի թուին մերում 1988»:

*Դեկտեմբերի 15-ին, կիրակի.- Դ կիրակի Յիսնակաց:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս, Պատարագ մատուցեց Տ. Գալուստ վրդ. Դարբինյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Երանի՛ խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին» (Մատթ. Ե 9) բնաբանով քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Դեկտեմբերի 22-ին, կիրակի.- Ե կիրակի Յիսնակաց:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գնել աբղ. Սողոմոնյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Որ բարձրացուցանէ զանձն` խոնարհեսցի, եւ որ խոնարհեցուցանէ զանձն` բարձրասցի» (Մատթ. ԻԳ 12) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 69):

Հավարտ Ս. Պատարագի Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

***Դեկտեմբերի 24-ին, երեքշաբթի.- Սրբոյն Ստեփաննոսի նախավկային եւ առաջին մարտիրոսին:***

Այսօր Մայր Տաճարում, Ս. Ստեփաննոսի Ս. Խորանի վրա, Պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: Սարկավագական ձեռնադրությունից հետո Սրբազան Հայրը «Առաքեալ եւ նախավկայ Քրիստոսի Սուրբ Ստեփաննոս. որ զքարկոծումն յանձն առեր և յանմահից բնակարանսն վերափոխեցար» (Շարակնոց) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 61):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Դեկտեմբերի 29-ին, կիրակի.- Զ կիրակի Յիսնակաց:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարգ մատուցեց Տ. Դավիթ աբղ. Քարամյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Տէ՛ր, գՔէն գոհանամ հանապազ, որ զանց արարեր զիմով անարժանութեամբս, այսպիսի ահաւոր եւ անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս...» (Պատարագամատույց) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 72):

Ս. Պատարագից հետո Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն: